600.0037.11.06.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2002 թվականի № 37Ն
ք.Երևան

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի № 7 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1998թ. սեպտեմբերի 1-ի № 42 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» № 7 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությանը կից՝ «Տեղեկատվություն ապրանքա-նյութական արժեքների ելքի մասին» № 1-4 ձևը և դրա լրացման հրահանգը (հավելված):
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1998թ. սեպտեմբերի 1-ի № 42 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» № 7 որոշման 1.1 կետով հաստատված՝ «Ապրանքանյութական արժեքների ելքի մասին» տեղեկատվական 1-4 ձևը և 1.2 կետով հաստատված՝ «Ապրանքանյութական արժեքների ելքի մասին» տեղեկատվական 1-4 ձևի լրացման հրահանգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
էներգետիկայի կարգավորող
հանձնաժողովի նախագահ՝ ***Վ.Մովսեսյան***

11 հունիսի 2002 թ.
Երևան